



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

---

### ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

9 ապրիլի 2026 թվականի

քաղաք Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան հետևյալ կազմով՝ նախագահող դատավոր՝ Դատարանի նախագահ Ա.Ա. Դրոնով, զեկուցող դատավոր՝ Մ.Տ. Կայիպով, դատավորներ՝ Է.Վ. Հայրիյան, Դ.Պ. Ալեքսանդրով, Կ.Կ. Ջունուշյան, Ա.Ա. Ջաֆարա, Ե.Ժ. Իսմայիլով, Ա.Բ. Կիշկեմբաև, Ն.Վ. Պավլովա, Ա.Գ. Թունյան,

դատական նիստի քարտուղար՝ Բ.Ռ. Էգեմբերդիևա,

հետազոտելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

առաջնորդվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի Ստատուտի 2-րդ, 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-րդ, 96-րդ, 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 85-րդ հոդվածներով՝

տրամադրում է «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» 2019 թվականի դեկտեմբերի 20-ի համաձայնագրի դրույթների պարզաբանման

վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունը՝ ըստ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի:

## I. Դիմողի հարցերը

1. Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ դիմող, Հանձնաժողով) դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝ «Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների աշխատավորների կենսաթոշակային ապահովության մասին» 2019 թվականի դեկտեմբերի 20-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) դրույթները պարզաբանելու դիմումով:

2. Դիմողը նշում է, որ Հանձնաժողովի աշխատանքային պրակտիկայում առաջանում են հարցեր՝ կապված Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն) անդամ պետությունների կենսաթոշակային ապահովության ոլորտի իրավասու մարմինների կողմից Համաձայնագրի դրույթների կիրառման հետ:

2.1. Անդամ պետություններում առաջացել են տարբեր մոտեցումներ Համաձայնագրի շրջանակներում իրենց միջազգային պարտավորությունների ընկալման վերաբերյալ, մասնավորապես՝

1) «աշխատավոր» եզրույթի մասով՝ այն առումով, թե հատկապես որ անձինք են դասվում «աշխատավորների» շարքին Համաձայնագրի նորմերի համատեքստում.

2) Համաձայնագրի 7-րդ եւ 12-րդ հոդվածների նորմերի բովանդակության մասով՝ Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակի իրավունքի որոշման համար անհրաժեշտ անհատական կենսաթոշակային գործակցի (այսուհետ՝ ԱԿԳ) հաշվարկման հարցի վերաբերյալ:

2.2. Նշվածը հանգեցնում է նրան, որ իրավակիրառ պրակտիկայում առաջանում են խնդիրներ՝ կապված անդամ պետությունների այն քաղաքացիների

կենսաթոշակների նշանակման հետ, որոնք ունեն աշխատանքային ստաժ անդամ պետություններում՝ ինչպես մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը (այսինքն՝ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը), այնպես էլ դրանից հետո:

3. Հաշվի առնելով շարադրվածը՝ Հանձնաժողովը խնդրում է Դատարանին տրամադրել խորհրդատվական եզրակացություն հետևյալ հարցերի վերաբերյալ.

3.1. Արդյո՞ք Համաձայնագրի 1-ին հոդվածի գործողությունը՝ 12-րդ հոդվածի հետ համակարգային փոխկապակցվածությամբ, տարածվում է անդամ պետությունների այն քաղաքացիների վրա, որոնք ունեն աշխատանքային ստաժ անդամ պետությունների տարածքում միայն մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը (մինչև 2021 թվականի հունվարի 1-ը), եւ արդյո՞ք տվյալ քաղաքացիները դասվում են աշխատավորների շարքին՝ Համաձայնագրի 1-ին հոդվածում օգտագործված եզրութաբանության իմաստով:

3.2. Արդյո՞ք կիրառվում են Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1-3-րդ կետերի դրույթները՝ 12-րդ հոդվածի հետ համակարգային փոխկապակցվածությամբ, անդամ պետությունների քաղաքացիների՝ մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը (մինչև 2021 թվականի հունվարի 1-ը) ձեռք բերված աշխատանքային ստաժի նկատմամբ:

## **II. Ընթացակարգը Դատարանում**

4. Դատարանի մեծ կոլեգիայի 2025 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ Հանձնաժողովի դիմումն ընդունվել է վարույթ:

5. Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 68-րդ կետի համաձայն («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 2 հավելված, այսուհետ համապատասխանաբար՝ Պայմանագիր, Ստատուտ)՝ պարզաբանման վերաբերյալ գործերի քննության կարգը սահմանվում է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 101 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական

տնտեսական միության դատարանի կանոնակարգով (այսուհետ՝ Կանոնակարգ):

6. Կանոնակարգի 75-րդ հոդվածին համապատասխան՝ դիմողի կողմից առաջադրված հարցերով գործի նախապատրաստման շրջանակներում հարցվել են լրացուցիչ տեղեկություններ եւ կարծիքներ Միության անդամ պետությունների բարձրագույն դատական ատյաններից եւ պետական մարմիններից:

Համապատասխան տեղեկատվությունը եւ նյութերը Դատարանին են տրամադրել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Բելառուսի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Բելառուսի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության նախարարությունը, Ղազախստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության նախարարությունը, Ղրղզստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը, Ղրղզստանի Հանրապետության աշխատանքի, սոցիալական ապահովության եւ միգրացիայի նախարարությունը, Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանը, Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանը, Ռուսաստանի Դաշնության գլխավոր դատախազությունը, Եվրասիական տնտեսական հանձնաժողովը:

### **III. Դատարանի եզրահանգումները**

7. Ստատուտի 2-րդ կետի համաձայն՝ Դատարանի գործունեության նպատակը, դրա դրույթներին համապատասխան, Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի, երրորդ կողմի հետ կնքվող՝ Միության միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների միատեսակ կիրառությունն ապահովելն է անդամ պետությունների եւ Միության մարմինների կողմից:

Ստատուտի 46-րդ եւ 50-րդ կետերին համապատասխան՝ Դատարանը Միության անդամ պետության կամ մարմնի դիմումի համաձայն իրականացնում է

Պայմանագրի, Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերի եւ Միության մարմինների որոշումների դրույթների պարզաբանում, ընդ որում՝ Դատարանը կիրառում է նաեւ միջազգային իրավունքի՝ համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքները եւ նորմերը:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի (այսուհետ՝ Վիեննայի կոնվենցիա) 31-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաեւ պայմանագրի օբյեկտի եւ նպատակների լույսի ներքո:

8. Պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Միության շրջանակներում ապահովվում են ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի շարժի ազատությունը, համակարգված, համաձայնեցված կամ միասնական քաղաքականության իրականացումը տնտեսության այն ճյուղերում, որոնք սահմանված են Պայմանագրով եւ Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագրերով:

Պայմանագրի 4-րդ հոդվածի համաձայն՝ Միության նպատակներն են, մասնավորապես, անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը՝ ի նպաստ դրանց բնակչության կենսամակարդակի բարձրացման շահերի, Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի միասնական շուկա ձեւավորելու ձգտումը: Դրանց իրագործմանը նպաստում է Համաձայնագրի կնքումը, որի նպատակը, ինչպես հետեւում է դրա նախաբանից, անդամ պետությունների քաղաքացիների կենսաթոշակային ապահովության ոլորտում հարաբերությունների կարգավորումն է: Այդ կապակցությամբ Պայմանագրի XXVI բաժնի՝ «Աշխատանքային միգրացիա» եւ Համաձայնագրի դրույթները ենթակա են մեկնաբանման Պայմանագրի եւ Համաձայնագրի վերոնշյալ նպատակների լույսի ներքո:

9. Նպատակ ունենալով զարգացնելու Պայմանագիրը, որով նախատեսվում է, որ աշխատավորների եւ նրանց ընտանիքի անդամների կենսաթոշակային ապահովությունը կարգավորվում է մշտական բնակության պետության օրենսդրությամբ, ինչպես նաեւ անդամ պետությունների միջեւ առանձին միջազգային պայմանագրին համապատասխան (98-րդ հոդվածի 3-րդ կետի երրորդ պարբերություն), կնքվել է Համաձայնագիրը, որը, համաձայն դրա 14-րդ հոդվածի 3-րդ կետի, ընդգրկվում է Միության իրավունքի կազմում է :

10. Դատարանի մեծ կոլեգիան հիմք է ընդունում այն, որ Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերի եւ ակտերի նորմեր-սահմանումներն ուղղված են համապատասխան պայմանագրի (ակտի) տեքստում օգտագործվող հասկացությունների բովանդակության բացահայտմանը: Այդ նորմերը պարտադիր են միջազգային պայմանագրի դրույթների մեկնաբանման եւ կիրառման ժամանակ, սակայն գործում են միայն փոխկապակցվածության մեջ այն կարգավորող դրույթների հետ, որոնք պարունակում են սահմանվող եզրույթները:

Դիմողի առաջին հարցի առնչությամբ նման մոտեցումը թույլ է տալիս եզրակացնել, որ հասկացությունների սահմանումները, այդ թվում՝ «աշխատավոր» եզրույթի, տրված են Համաձայնագրի 1-ին հոդվածում՝ տվյալ միջազգային պայմանագրի հաջորդ հոդվածներում դրանց օգտագործման նպատակով, որոնց բովանդակությունը եւ իմաստը ենթակա են պարզման՝ հաշվի առնելով կոնկրետ հոդվածի համատեքստը:

Համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ աշխատավորն անդամ պետության այն քաղաքացին է, որի համար մյուս անդամ պետության տարածքում աշխատանքային կամ այլ գործունեություն իրականացնելու միջոցով ձեւավորվում կամ ձեւավորվել են կենսաթոշակային իրավունքներ:

Համաձայնագրի 3-րդ հոդվածի 1-3-րդ կետերին համապատասխան՝ աշխատավորների կենսաթոշակային իրավունքները ձեւավորվում են կենսաթոշակային վճարների հաշվին՝ նույն պայմաններով եւ նույն կարգով, ինչ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների կենսաթոշակային

իրավունքների ձեռավորումը, իսկ աշխատավորներին (ընտանիքի անդամների) կենսաթոշակ նշանակելու եւ վճարելու իրավունքի իրացումը՝ նույն պայմաններով, ինչ աշխատանքի տեղավորման պետության քաղաքացիների համար: Ընդ որում, կենսաթոշակի անմիջական նշանակումը եւ վճարումն իրականացվում են այն անդամ պետության իրավասու մարմնի կողմից, որի օրենսդրության համաձայն, աշխատավորը ձեռք է բերել համապատասխան իրավունք:

11. Համաձայնագիրը ստորագրվել է 2019 թվականի դեկտեմբերի 20-ին եւ ուժի մեջ է մտել 2021 թվականի հունվարի 1-ին:

Վիեննայի կոնվենցիայի 28-րդ հոդվածի համաձայն, եթե պայմանագրից այլ մտադրություն չի բխում կամ չի պարզվել, ապա պայմանագրի դրույթները պայմանագրի մասնակցի համար պարտադիր չեն՝ ցանկացած գործողության կամ փաստի առնչությամբ, որոնք նշված մասնակցի համար տեղի են ունեցել՝ մինչեւ պայմանագիրն ուժի մեջ մտնելը, կամ ցանկացած այնպիսի իրավիճակի առնչությամբ, որը դադարել է գոյություն ունենալուց մինչեւ այդ ամսաթիվը:

Համաձայնագրով նախատեսված չէ դրան հետադարձ ուժ տալը՝ ինչպես ամբողջությամբ, այնպես էլ դրա առանձին դրույթների մասով:

Հաշվի առնելով շարադրվածը՝ Դատարանի մեծ կոլեգիան հանգում է այն եզրակացության, որ Համաձայնագրի նորմերը տարածվում են այն կենսաթոշակային հարաբերությունների վրա, որոնք առաջանում են այն ուժի մեջ մտնելուց հետո եւ քաղաքացու ու իրավասու պետական մարմնի միջեւ իրավահարաբերություններ են՝ կենսաթոշակային իրավունքների ձեռավորման, կենսաթոշակի նշանակման եւ վճարման կապակցությամբ:

12. Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1-ին կետը նախատեսում է, որ յուրաքանչյուր անդամ պետություն կենսաթոշակի իրավունքը սահմանում է իր օրենսդրությանը համապատասխան՝ ելնելով իր տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժից՝ հաշվի առնելով սույն համաձայնագրի դրույթները: Ընդ որում, Համաձայնագրին համապատասխան՝ աշխատանքային ստաժը աշխատանքի եւ (կամ) այլ գործունեության ժամանակահատված է (այդ թվում՝

կենսաթոշակային վճարների վճարմամբ), ինչպես նաև կենսաթոշակի իրավունքը որոշելիս եւ դրա չափը հաշվարկելիս անդամ պետության օրենսդրությանը համապատասխան հաշվի առնվող այլ ժամանակահատվածներ են:

Համաձայնագրի 7-րդ հոդվածի 5-րդ կետի ուժով՝ աշխատավորի կենսաթոշակի իրավունքը (բացառությամբ կուտակային կենսաթոշակի, հաշմանդամության եւ կերակրողին կորցնելու դեպքում աշխատանքային (ապահովագրական) կենսաթոշակների) առաջանում է անդամ պետության տարածքում Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված առնվազն 12 ամսվա աշխատանքային ստաժի առկայության դեպքում: Այն դեպքում, երբ մեկ անդամ պետության տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժը բավարար չէ կենսաթոշակի իրավունքի առաջացման համար, ապա հաշվի է առնվում մյուս անդամ պետությունների տարածքում անդամ պետություններից յուրաքանչյուրի օրենսդրությանը համապատասխան ձեռք բերված աշխատանքային ստաժը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի աշխատանքային ստաժը ժամանակի առումով համընկնում է (Համաձայնագրի 7-րդ հոդվածի 2-րդ կետ):

Դատարանի մեծ կոլեգիան շարադրվածի հիման վրա հանգում է այն եզրակացության, որ Համաձայնագրին համապատասխան կենսաթոշակի իրավունքը որոշելիս հաշվի է առնվում Միության անդամ պետության քաղաքացու կողմից ձեռք բերված աշխատանքային ստաժը, այդ թվում՝ Միության այլ անդամ պետությունների տարածքներում:

13. Համաձայնագրի 7-րդ հոդվածի 3-րդ կետը նախատեսում է հատուկ նորմ, որը տարածվում է միայն Ռուսաստանի Դաշնությունում կենսաթոշակի սահմանման վրա: Տվյալ դրույթի հիման վրա՝ Ռուսաստանի Դաշնությունում՝ Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան կենսաթոշակի իրավունքը սահմանելիս ԱԿԳ-ի մեծությունը որոշվում է Ռուսաստանի Դաշնության տարածքում, ինչպես նաև նախկին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժի ժամանակահատվածների համար:



Այն դեպքում, երբ Համաձայնագրի 7-րդ հոդվածի 3-րդ կետի առաջին պարբերությանը համապատասխան որոշված ԱԿԳ-ի մեծությունը կենսաթոշակի իրավունքի առաջացման համար բավարար չէ, հաշվի է առնվում ԱԿԳ-ի մեծությունը, որը հավասար է 1-ի՝ անդամ պետությունների տարածքներում ձեռք բերված աշխատանքային ստաժի յուրաքանչյուր 1 տարվա համար: Ընդ որում, աշխատանքային ստաժի 1 ամիսը կազմում է լրիվ օրացուցային տարվա համար սահմանված գործակցի  $1/12$  մասը, իսկ 1 օրը՝ լրիվ օրացուցային տարվա համար սահմանված գործակցի  $1/360$  մասը:

14. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2014 թվականի նոյեմբերի 12-ի թիվ 103 որոշմամբ հավանության արժանացած՝ «Կենսաթոշակային ապահովության ոլորտում համագործակցության մասին» միջազգային պայմանագրի հայեցակարգի համաձայն՝ Համաձայնագրի մշակման նախադրյալներից եւ հիմնական նպատակներից մեկը աշխատավորների կենսաթոշակային իրավունքների պահպանման եւ պաշտպանության հարցի լուծման անհրաժեշտությունն է եղել, այդ թվում՝ անդամ պետությունների քաղաքացիների՝ Միության մի երկրից մյուսը տեղափոխվելու դեպքում:

15. Համաձայնագրի նպատակաբանական մեկնաբանությունը Դատարանի մեծ կոլեգիային թույլ է տալիս հանգել այն եզրակացության, որ Համաձայնագիրն ընդունվել է ազգային օրենսդրությունների՝ նվազագույն պայմանների համակցության վերաբերյալ պահանջի իրականացման նպատակով, որպեսզի անդամ պետությունների քաղաքացիները կարողանան հավակնել կենսաթոշակի, եւ մի անդամ պետության քաղաքացիներին մյուս անդամ պետության տարածքում ձեռք բերված կենսաթոշակային իրավունքների պահպանումը երաշխավորելու նպատակով: Դա հնարավոր է պետությունների կողմից Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված կարգով իրենց տարածքներում ձեռք բերված ամբողջ ստաժը փոխադարձ հաշվառելու պայմանով:

16. Համաձայնագրի շրջանակներում անհրաժեշտ է տարանջատել 7-րդ հոդվածով կենսաթոշակի իրավունքի որոշմանը վերաբերող

պարտավորությունները եւ Համաձայնագրի 12-րդ հոդվածի անցումային դրույթները, որոնք կարգավորում են կենսաթոշակի նշանակման եւ վճարման հարցերը (դրա իրավունքի առկայության դեպքում):

Այսպէս, Համաձայնագրի 12-րդ հոդվածի համաձայն՝

Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված աշխատանքային ստաժի համար կենսաթոշակը նշանակվում եւ վճարվում է այն անդամ պետության կողմից, որի տարածքում ձեռք է բերվել համապատասխան աշխատանքային ստաժը.

Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց առաջ ձեռք բերված աշխատանքային ստաժի համար կենսաթոշակը նշանակվում եւ վճարվում է անդամ պետությունների օրենսդրությանը եւ «Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» 1992 թվականի մարտի 13-ի համաձայնագրին համապատասխան, իսկ Բելառուսի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար՝ «Սոցիալական ապահովության բնագավառում համագործակցության մասին» 2006 թվականի հունվարի 24-ի՝ Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ պայմանագրին համապատասխան:

Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ Համաձայնագրի 12-րդ հոդվածի դրույթները, որոնց համաձայն, Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ձեռք բերված ստաժի համար կենսաթոշակը նշանակվում եւ վճարվում է այն անդամ պետության կողմից, որի տարածքում ձեռք է բերվել համապատասխան աշխատանքային ստաժը, համապատասխանում են Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին՝ յուրաքանչյուր պետության կողմից կենսաթոշակի իրավունքի որոշման վերաբերյալ՝ ելնելով իր տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժից՝ հաշվի առնելով Համաձայնագրի դրույթները:

Ինչ վերաբերում է մինչեւ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը ձեռք բերված աշխատանքային ստաժի համար կենսաթոշակի նշանակմանը եւ վճարմանը, ապա

Համաձայնագրի 12-րդ հոդվածը մատնանշում է ոչ միայն անդամ պետությունների օրենսդրությունների, այլև հետեւյալ միջազգային պայմանագրերի կիրառման պարտադիր լինելը՝ «Կենսաթոշակային ապահովության բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների քաղաքացիների իրավունքների երաշխիքների մասին» 1992 թվականի մարտի 13-ի համաձայնագիր, իսկ Բելառուսի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար՝ «Սոցիալական ապահովության բնագավառում համագործակցության մասին» 2006 թվականի հունվարի 24-ի՝ Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ պայմանագիրը:

Նման հանգամանքներում, Դատարանի մեծ կոլեգիայի կարծիքով, անդամ պետությունների աշխատավորների կողմից ձեռք բերված կենսաթոշակային իրավունքներն ապահովվում են իրացման իրավական երաշխիքներով նաեւ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու հետ կապված իրավական կարգավորման փոփոխությունից հետո:

Համաձայնագրի 12-րդ հոդվածը կարգավորում է անցումը տարածքայնության սկզբունքի վրա հիմնված կենսաթոշակային ապահովության ռեժիմից համամասնականության սկզբունքին, որը նախատեսում է կենսաթոշակների վճարման ծախսերի բաշխում՝ կախված անդամ պետություններից յուրաքանչյուրի տարածքում քաղաքացիների կողմից ձեռք բերված կենսաթոշակային իրավունքների մեծությունից: Ընդ որում, տվյալ նորմի նպատակն անդամ պետությունների քաղաքացիների՝ մինչեւ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելն առաջացած կենսաթոշակի իրավունքների պահպանումն է: Հենց այդ պատճառով Համաձայնագրի 12-րդ հոդվածով նախատեսվել է՝ մինչեւ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը ձեռք բերված աշխատանքային ստաժի համար կենսաթոշակի նշանակումը եւ վճարումը՝ անդամ պետությունների օրենսդրությանը եւ ԱՊՀ Համաձայնագրին համապատասխան, իսկ Բելառուսի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության համար՝ Ռուսաստանի Դաշնության եւ Բելառուսի Հանրապետության միջեւ Պայմանագրին համապատասխան:

17. Հաշվի առնելով շարադրվածը՝ Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1-3-րդ

կետերը՝ Համաձայնագրի 12-րդ հոդվածի հետ փոխկապակցված ընկալմամբ, նշանակում են, որ Համաձայնագրի նշված նորմերը կիրառվում են աշխատավորների (Միության անդամ պետությունների քաղաքացիների)՝ ինչպես մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը, այնպես էլ դրանից հետո ձեռք բերված աշխատանքային ստաժի նկատմամբ:

18. Դատարանի մեծ կոլեգիան շարադրվածի հիման վրա ներկայացնում է հետևյալ պարզաբանումը՝

18.1. Համաձայնագրի նորմերը տարածվում են այն կենսաթոշակային հարաբերությունների վրա, որոնք առաջանում են այն ուժի մեջ մտնելուց հետո, այսինքն՝ 2021 թվականի հունվարի 1-ից: Այդ կապակցությամբ՝ կենսաթոշակի իրավունքի առաջացման վերաբերյալ Համաձայնագրի նորմերը կիրառվում են Միության անդամ պետությունների այն քաղաքացիների նկատմամբ, որոնք ունեն 2021 թվականի հունվարի 1-ից հետո այդ պետությունների տարածքներում ձեռք բերված առնվազն 12 լրիվ ամսվա ստաժ:

Հասկացությունների սահմանումները, այդ թվում՝ «աշխատավոր» հասկացության, տրված են Համաձայնագրի 1-ին հոդվածում՝ տվյալ միջազգային պայմանագրի հաջորդ հոդվածներում օգտագործվելու նպատակով: Նման սահմանումները պարտադիր են Համաձայնագրի դրույթների մեկնաբանման եւ կիրառման ժամանակ, սակայն գործում են միայն այն կարգավորող դրույթների հետ փոխկապակցվածության մեջ, որոնք պարունակում են այդ հասկացությունները:

18.2. Համաձայնագրի 7-րդ հոդվածի 1-3-րդ կետերը կարգավորում են անդամ պետությունների քաղաքացիների կենսաթոշակի իրավունքի որոշման կարգը:

Ընդ որում, անդամ պետությունները պարտավոր են հաշվի առնել աշխատանքային ստաժը Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից սկսած: Մեկ անդամ պետության տարածքում ձեռք բերված աշխատանքային ստաժը կենսաթոշակի իրավունքի առաջացման համար բավարար չլինելու դեպքում հաշվի է առնվում մյուս անդամ պետությունների տարածքներում աշխատանքային ստաժը, այդ թվում՝ մինչև 2021 թվականի հունվարի 1-ն ընկած

Ժամանակահատվածում ձեռք բերված աշխատանքային ստաժը:

7-րդ հոդվածի 1-3-րդ կետերի դրույթները՝ Համաձայնագրի 12-րդ հոդվածի հետ փոխկապակցված ընկալմամբ, նշանակում են, որ Համաձայնագրի նշված նորմերը կիրառվում են աշխատավորների (Միության անդամ պետությունների քաղաքացիների)՝ ինչպես մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը (մինչև 2021 թվականի հունվարի 1-ը), այնպես էլ դրանից հետո ձեռք բերված աշխատանքային ստաժի նկատմամբ:

#### **IV. Եզրափակիչ դրույթներ**

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին:

Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Ա.Ա. Դրոնով

Դատավորներ՝

Է.Վ. Հայրիյան

Դ.Պ. Ալեքսանդրով

Կ.Կ. Ջունուշյան

Ա.Ա. Ջաբարա

Ե.Ժ. Բամայիլով

Մ.Տ. Կայիպով

Ա.Բ. Կիշկենբաև

Ն.Վ. Պավլովա

Ա.Գ. Թունյան